## ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

**2023 թ.-ի ապրիլի 11-ից 13-ը ք. Մոսկվայում (ՌԴ) կայացած «Expo Electronica 2023» էլեկտրոնիկայի 25-րդ միջազգային ցուցահանդեսի մասնակցության**

1. **Անունը, ազգանունը.**

   Սիրանուշ Շահմուրադյան

   Մարո Նալբանդյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի գլխավոր մասնագետ

   Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության շուկայի զարգացման վարչության շուկայի հետազոտության բաժնի գլխավոր մասնագետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

   Ռուսաստանի Դաշնություն, ք. Մոսկվա, 2023 թ. ապրիլի 10-ից 14-ը

4. **Հրավիրող կողմը.**

   «Hyve Expo International» LLC

5. **Գործուղման նպատակը.**

   2023 թ. ապրիլի 11-ից 13-ը ք. Մոսկվայում կայացած «Expo Electronica 2023» էլեկտրոնիկայի միջազգային 25-րդ ցուցահանդեսին միասնական տաղավարով հայկական ընկերությունների մասնակցության ապահովում

## 6. Հանդիպումներն ու քննարկված հարցերը.

«Expo Electronica 2023» էլեկտրոնիկայի միջազգային 25-րդ ցուցահանդեսին մասնակցում էին շուրջ 450 ռուսական/արտասահմանյան ընկերություններ և շուրջ 21070 այցելուներ: Միջոցառման օրերին հայկական տաղավարը մարդաշատ է եղել՝ գրավելով ինչպես պոտենցիալ գործընկերների, այնպես էլ միջոցառման այցելուների ուշադրությունը: Ակտիվ հանդիպումներ/քննարկումներ են կայացել ինչպես մի շարք արտասահմանյան ոլորտային ընկերությունների ղեկավար կազմի ու ներկայացուցիչների հետ, այնպես էլ ՌԴ-ում բնակություն հաստատած հայ գործարարների հետ՝ ուղղված նոր համագործակցային ուղիների հայտնաբերմանը: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել՝ շարունակելու բանակցությունները՝ առարկայական դարձնելու ու համագործակցության մեկնարկը տալու նպատակով:

Ցուցահանդեսի օրերին.

- ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) աշխատակիցներն ընդունել են հայկական տաղավարի կառուցապատման համար պատասխանատու ճարտարապետական ընկերությունից տաղավարը, ցուցահանդեսի բոլոր օրերին ապահովել են վերջինիս պատշաճ տեսքը,
- համակարգել են Նախարարության ստենդի աշխատանքը, ներկայացրել Նախարարության կողմից մշակված և իրականացվող ծրագրերն ու միջոցառումները,
- վարել են արտասահմանյան գործընկերների, միջոցառման կազմակերպիչների հետ հանդիպումներն ու բանակցությունները, ապահովել են հայկական տաղավարում ներկայացվող ընկերությունների և նրանց պրոդուկտների ներկայացումը,
- ցուցահանդեսի մասնակցության արդյունքում հայկական ոլորտային ընկերությունները մի շարք նախնական պայմանավորվածություններ են ձեռք բերել պոտենցիալ գործընկերների, հաճախորդների հետ, որոնք հետևողական աշխատանքի արդյունքում կարող են վերածվել շոշափելի արդյունքների,

- հայկական տաղավարը գրավել է նաև տեղական լրատվամիջոցների ուշադրությունը, որի արդյունքում Նախարարության ստենդն ու տաղավարում ներկայացված արտադրանքը լուսաբանվել են ռուսական լրատվամիջոցների կողմից:

**7. Ստորագրությունը, ամսաթիվը.**

Սիրանուշ Շահմուրադյան

Մարո Նալբանդյան

18.04.2023 թ.